ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ-ն ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/36 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	2R-G.002-18	Lamsys	2R-G.002-18	Ламинарные Системы	Լաբորատոր պահարան՝ կենդանիների պահպանման համար։ Նախատեսված է լաբորատոր կենդանիներով վանդակների պահպանման համար։ Պահարանի օդը հնարավոր է մաքրել G4, HEPA և ածխածնային ֆիլտրերի միջոցով։ Սարքի դիմային հատվածում առկա է դրա կարգավորման համար նախատեսված կարգավորման պանել՝ կոճակներով։ Ունի ծխնիներով բացվող 2 դռներ։ Ներառում է 6 հատ ծակոտկեն դարակներ՝ պատրաստված չժանգոտվող պողպատից։

					Դարակների միջև հեռավորությունը՝ 390 մմ։ Յուրաքանչյուր դարակի վերևում կա 1 ՈՒՄ լամպ LED։ Օդի հեռացման համակարգի վերին հատվածը հովանոցային տիպի է։ Ոտքերը՝ պտուտակային։ Սարքի աշխատանքային համակարգի լեզուն՝ անգլերեն և ռուսերեն։ Սարքի միացման ցուցիչի առկայություն։ Կառավարման համակարգը ունի՝1.Աշխատանքային խցիկի լուսավորության միացման և անջատման կոճակներ և լուավորության միացման ցուցիչ, 2.Քարշիչ համակարգի միացման և անջատման կոճակներ և քարշիչ համակարգի միացման ցուցիչ, 3.ՈՒՄ ճառագայթման միացման և անջատման կոճակներ և ՈՒՄ ճառագայթման միացման ցուցիչ, 4.ՈՒՄ ճառագայթման տևողության ծրագրավորման հնարավորություն՝ մինչև ճառագայման ցիկլի ավարտը մնացած ժամանակի ցուցադրումով, 5. ՈՒՄ լամպերի աշխատանքի ընդհանուր տևողության հաշվիչ, 6.Օդի հոսքի արագության ավտոմատ կարգավորում և օդի

					հոսքի հեռացման հաստատուն արագության ապահովում՝ անկախ HEPA ֆիլտրի աղտոտվածության աստիճանից։ 7.Աշխատանքային նորմալ պայմանների խախտման դեպքում վիզուալ և ձայնային ազդանշանային համակարգերի ավտոմատ միացում, 8.Աշխատանքային խցիկից հեռացվող օդի ծավալի վերաբերյալ տեղեկատվության պատկերում իրական ժամանակում։ Սարքի կողային և հետին պատերը՝ մետաղյա, ծխնիներով դռները՝ ապակյա, դիմացկուն ՈՒՄ ճառագայթման և ախտահանող լուծույթների նկատմամբ։ Դռներից յուրաքանչյուրը ունի բռնակներ։ Օդը ներքաշվում է պահարանի հիմքում առկա ծակոտիների միջոցով։ Սարքը արտաքին օդափոխման համակարգին միանում է հովանոցային արտանետման համակարգի միջոցով, որը ունի կոմպենսացիոն ճեղք՝ բացառելու համար արտաքին օդափոխության համակարգի ազդեցությունը սարքի աշխատանքի վրա։ Սարքը կառավարվում է

					միկրոպրոցեսորային համակարգի միջոցով, ունի օդի հոսքի պարամետրերի չափման հնարավորություն; ապահովիչ և ներկառուցված սնուցման լար։ Սարքի չափսերը՝ 1800 x 660 x 2042 մմ։ Աշխատանքային խցիկի չափսերը պետք է լինեն՝ 1750 x 533 x 1250 մմ։ Նախնական ֆիլտրերի քանակը՝ 2 HEPA ֆիլտրերի քանակը՝ 2 Ածխածնային ֆիլտրերի քանակը՝ 1 Սարքից դուրս եկող օդի որակը համապատասխանում է 5 ISO ստանդարտի պահանջներին։ Մատակարարը պետք է տեղադրի սարքը և կատարի անձնակազմի ուսուցումը։ Մատակարարը պետք է ներկայացնի արտադրողի լիազորագիր։ Երաշխիքային ժամկետը 1 տարի

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Концерн-Энергомаш ЗАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/36 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1					